

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N 53 – Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ մասերի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի հունիսի 17-ի <<Աշխատանքային խմբեր ստեղծելու մասին>> N 53-Ա կարգադրության մեջ կատարել փոփոխություններ՝ կարգադրության 1-ին կետում՝

1) <<Դավթյան Գ. - մարզպետարանի աշխատակազմի ԱՍԱ վարչության առողջապահության բաժնի վարիչ>> բառերը փոխարինել <<Հարությունյան Ա. - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի տեղակալ >> բառերով.

2) <<Այվազյան Մ. - մարզպետարանի աշխատակազմի ԱՍԱ վարչության առողջապահության բաժնի առաջատար մասնագետ>> բառերը փոխարինել <<Այվազյան Մ. - մարզպետարանի աշխատակազմի ԱՍԱ վարչության առողջապահության բաժնի վարիչ>> բառերով:

1. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ